



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ  
ՆԱԽԱՐԱՐ  
Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

«06» 07 2019թ.

# ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ  
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000053

**Ձեռնարկողը՝**

**«ԴԱՆՍԱՌ» ՍՊԸ**

Շիրակի մարզ, Ստոնաղբյուր համայնք

**Գործունեությունը՝**

**Գյուլիբուլախի տուֆերի հանքավայրի արդյունահանման  
շրջակա միջավայրի վրա ազդեցության  
գնահատման հաշվեկշիռություն**

Շիրակի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության  
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի  
տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Դոնոյան

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000053

« 06 » 07 2019թ.

**Գյուլիբուլախի տուֆերի հանքավայրի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Պատվիրատու՝	<<Դանսառ>> ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն և կից փաստաթղթեր
Գործունեության կատեգորիա՝	«Ա»
Տեղադրման վայրը՝	Շիրակի մարզի Ամասիա համայնք

Գյուլիբուլախի տուֆերի հանքավայրը գտնվում է Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրի վարչական տարածքում:

Հանքավայրը շահագործվել է 1963թ-ից.: Մնացորդային պաշարները հանքավայրում կազմում են 1354,2հազ.խմ: Բացահանքի տարածքը կազմում է 1.1հա: Նախկինում շահագործված է եղել նախագծվող բացահանքի արևմտյան մասը շուրջ 0.2հա:

Բացահանքի կոորդինատներն են ARM WGS-84 համակարգով՝

X=4528707 Y=8393760

X=4528763 Y=8393612

X=4528857 Y=8393704

X=4528815 Y=8393744

X=4528815 Y=8393744

Բացահանքին ամենամոտ գյուղը Կապան է, որը գտնվում է 2.1կմ հեռավորության վրա:

Հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ ՊՊՀ-ի 24.03.1972թ. թիվ 6504 արձանագրությամբ ըստ կարգերի հետևյալ քանակությամբ՝ A-213հազ.խմ, B-358հազ.խմ, C<sub>1</sub> - 1097 հազ.խմ, A + B +C<sub>1</sub> - 1668 հազ.խմ:

Տուֆի պաշարները հաստատված են որպես հումք երեսապատման և պատքարի արտադրության համար (ԳՈՍՍ-9479-69, ԳՈՍՍ-9480-69, ԳՈՍՍ-4001-66 և ՏՊ-100-62): Բլոկների ելքը հաստատված է 41%:

Գյուլիբուլախի տուֆերի հանքավայրի շահագործման բարենպաստ լեռնատեխնիկական պայմանները կանխորոշում են տուֆերի հաստաշերտի մշակումը բաց լեռնային աշխատանքներով:

Նախագծված բացահանքը վերջնական դիրքում կունենա հետևյալ չափերով՝

- ամենամեծ երկարությունը - 157մ,
- ամենամեծ լայնությունը - 130մ,
- ամենամեծ խորությունը - 8.0մ,
- օգտակար հաստաշերտի միջին հզորությունը - 4.4մ /3.2-6.0մ/,
- օգտակար հանածոյի մարվող պաշարների ծավալը - 48400խմ
- օգտակար հանածոյի արդյունաբերական պաշարների ծավալը - 45980խմ,



- մակաբացման ապարների ընդհանուր ծավալը – 6710խմ, այդ թվում հողաբուսական շերտ 3630խմ, փուշտա 3080խմ,

- բացահանքային դաշտի օտարման տարածքը – 1.1հա:

Հանքարդյունահանման աշխատանքների ժամանակ բացահանքի նախագծային կորուստներն են՝ ըստ օգտակար հաստաշերտի լեռնաերկրաբանական և լեռնատեխնիկական պայմանների՝ 2420խմ կամ 5.0%, շահագործական կորուստներ և հանքանյութի տեղափոխման ժամանակ տեղի ունեցող կորուստներ՝ 0.2%:

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 24 տարի:

Բացահանքը շահագործման հանձնելու համար անհրաժեշտ է կատարել հետևյալ լեռնակապիտալ աշխատանքները՝

- հանքավայրի հարավ-արևմտյան մասից մոտեցող գրունտային ճանապարհից արտաքին թեք խրամի կառուցում 60մ երկարությամբ և 840խմ ծավալով,

- աշխատանքների նախնական ճակատի պատրաստում 975խմ ծավալով,

- աշխատանքային հրապարակի կառուցում – 350խմ:

Բացահանքի դաշտի բացումը կատարվելու է հանքադաշտի հարավ-արևմտյան մասից մեկ թեք խրամի միջոցով, որը հնարավորություն է տալիս հանքաշերտը մշակել միանվագ ամբողջ հզորությամբ, որից հետո կատարվելու է հորիզոնական կտրող կիսախրամի անցում:

Հանքավայրի մշակման համար ընտրվում է ընդլայնական, միակողմանի համատարած մշակման համակարգ, մակաբացման ապարների ներքին լցակույտի ձևավորմամբ:

Մշակման համակարգի պարամետրերն են՝

- հանույթային աստիճանի բարձրությունը – մինչև 6,0մ,
- ենթաստիճանի բարձրությունը – մինչև 3.0մ,
- աստիճանի թեքության անկյունը – 90°,
- աշխատանքային հրապարակի լայնությունը – 15-20.0մ:

Նախատեսվում է միաքարերի արդյունահանման աշխատանքները կատարել կտրիչաշղթայավոր քարհատ մեքենայի և հորատասեպային հիդրավլիկ ճեղքման լեռնային կոմպլեքսի միջոցով՝ հորատասեպային եղանակով:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվելու է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար:

Խմելու ջուր բերվելու է կցովի ջրի ցիստեռնով, իսկ տեխնիկական ջուրը ջրցան ավտոմեքենայով:

Լցակույտ առաջացնող ապարները 33838խմ ընդհանուր ծավալով ներկայացված են մակաբացման ապարներով 6710խմ /այդ թվում՝ ժամանակակից առաջացումներ – 3630խմ, ճաքճքված տուֆ – 3080խմ/ և 27128խմ արտադրական թափոններով:

Բացահանքի շահագործման սկզբից լցակույտ առաջացնող ապարները բուլդոզերով մշակվելու և տեղափոխվելու են մինչև 15-20մ հեռավորության վրա՝ ներքին լցակույտ և պահպանվելու են: Ներքին լցակույտի բարձրությունը կազմելու է 3.1մ :

Վերակուլտիվացվող մակերեսը կազմելու է 1.1հա, որի իրականացման համար նախատեսված է 698.13 հազ. դրամ :

Համաձայն հանքավայրի ջրաերկրաբանական պայմանների՝ ստորգետնյա ջրերը հանքավայրի տարածքում բացակայում են:

Բացահանքի տարածքը թափվող հորդ անձրևային ջրերի մի մասը ներծծվում են բացահանքի հատակի ապարների ծակոտիների և ճեղքերի միջով, իսկ մյուս մասը հեռանում է ինքնահոս կերպով:

Հանքավայրի հարակից տարածքներում բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան:



Բացահանքի տարածքում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսական և կենդանական տեսակներ չեն արձանագրվել, հանքավայրի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ գրանցված չեն:

Ըստ նախագծային փաստաթղթերի նախատեսված են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներ:

Տեղամասի շահագործման ընթացքում իրականացվելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն ու մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումներ.

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ եռամսյակային հաճախականությամբ,

- լեռնատրանսպորտային սարքավորումների աշխատանքային վիճակի՝ մասնավորապես չեզոքացուցիչ սարքավորումների սարքին վիճակի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին երկու անգամ հաճախականությամբ,

- օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ տարին երկու անգամ հաճախականությամբ:

Ջրային ավազանի աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տարածքում գրունտային ջրերը բացակայում են, իսկ լեռնային աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն կանխատեսվում:

Օրենսդրությամբ սահմանված կարգով Շիրակի մարզի Ամասիա համայնքի Բյուրակն բնակավայրում իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախագծի իրականացմանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Փորձաքննական գործընթացում կատարվել են ՇՄԱԳ հաշվետվության լրամշակումներ և հաշվի են առնվել ներկայացված առաջարկություններն ու դիտողությունները: Առկա է «Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի դրական փորձաքննական եզրակացությունը:

### Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով՝ ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

2. Առաջացած թափոնների հեռացումն (շինադրի, կենցաղային ադրի) անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

### ԵՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Դանսառ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գյուլիբուլախի տուֆերի հանքավայրի արդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Գլխ. մասնագետ



Զ. Զուռնայան